ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրովգնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ապարան 24.06.2024թ.
Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝
Արկադի Կարապետյան –համայնքի ղեկավարի առաջին տեղակալ (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝
Արկադի Ալեքսանյան- համայնքի ղեկավարի օգնական(ԳԱ)
Անատոլ Դաղլարյան քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (ԳԱ)
Իշխան Հայրապետյան - քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ(ԲԱ)
Լիլետա Մկրտչյանին - քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝
Հայկ Հովսեփյան

1. Տեղեկատվություն՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով Գնանշման հարցմանընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.1 Մասնակիցների ներկայացրած հայտերի բացում
1.2 Մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատում
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.Տեղեկատվություն՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված բացման վայրի , օրվա և ժամի մասին.

2.1 ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով բացվել են **հունիսի 24-ին, ժամը 14:00-ին:**
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքի գների վերաբերյալ.

3.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գիը /գնվելիք ծառայությա համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությա կատարման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Ապարան համայնքի Ապարան քաղաքի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	3 583 300
2	Ապարան համայնքի Երնջատափ բնակավայրի բազմամուտք բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	538 460

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Տեղեկատվություն www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած Մասնակիցների մասին.

4.1 Ապարանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված **ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	ՀՎՀՀ	Գործունեության և էլ փոստի հասցեներ
1	Վոլմ Քոմփանի ՍՊԸ	00497045	Ք. Երևան, նոր Արեշ 14-րդ փող,38 ա,50

			wolmcompany@mail.ru
2	Վահրամ Կնյազյան Ա/Ձ	61718934	Ք. Արթիկ, Բաղրամյան ½, knyazyanvvs@mail.ru
3	ՆՅՈՒ ՀՈՄ ՍՊԸ	00210956	-

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկատվություն ՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով Գնանշման հարցմանընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

5.1 Ընդունել ի գիտություն՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով ընթացակարգին հայտեր են ներկայացրել երեք մասնակից:

5.2 Ընդունել ի գիտություն, որ armeps.am էլեկտրոնային համակարգով հաայտ է ներկայացրել **ՆՅՈՒ ՀՈՄ ՍՊԸ-ն**, սակայն հայտում առկա հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում գնային առաջարկը, ներկայացրած են **Բագաս ՍՊԸ-ի անունով**:

5.2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ՆՅՈՒ ՀՈՄ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ գնային առաջարկի բացակայության հիմքով:

5.3 ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով մյուս մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

5.4 ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԾՁԲ-54/24 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը թերի են, մասնավորապես՝

Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի ներկայացրած հայտում բացակայում է հրավերով պահանջվող հիմնական աշխատակազմի տեղեկանքը և կից փաստաթղթերը: Հաշվի առնելով, որ <<Վահրամ Կնյազյան>> Ա/Ձ–ն մասնակցել է ընթացակարգի երկու չափաբաժիններին՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել աշխատակազմի առնվազն երկու անձանց տվյալները և կից փաստաթղթերը՝ համաձայն հրավերի 2.4.1 Գ) պարբերության Ա) ենթակետի և Հավելված 3-ի:

Վոլմ Քոմփանի ՍՊԸ- ի ներկայացրած հայտում աշխատատակազմի տեղեկանքը թերի է երկու չափաբաժինների դեպքում էլ նշված են նույն անձի տվյալները և գրավոր համաձայնությունը: Հաշվի առնելով, որ **Վոլմ Քոմփանի ՍՊԸ** –ն մասնակցել է ընթացակարգի երկու չափաբաժիններին՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել աշխատակազմի առնվազն երկու անձանց տվյալներ և կից փաստաթղթեր՝ համաձայն հրավերի 2.4.1 Գ) պարբերության Ա) ենթակետի և Հավելված 3-ի:

5.5 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը ծանուցեց **Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ին, Վոլմ Քոմփանի ՍՊ-ին** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

5.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման հաջորդ նիստը հրավիրել 26.06.2024թվականին ժամը 14:00-ին ք. Ապարան Բաղրամյան 26 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Կարապետյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Ալեքսանյան

_____ Ա. Դաղլարյան

_____ Ի. Հայրապետյան

_____ Լ.Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար ՝ _____ Հ. Հովսեփյան